

և և թէ դայտոսիկ առնեմ, լինիմ ես թշնամի թագաւորին»:

Այնուհետեւ առանձնացաւ Պօղոս վարդապետ Մեծ Անապատ, եւ «կայր միակեցութեամբ, լռեալ ի խցի, մշտամատոյց աղօթիւք խօսակցելով ընդ Աստուծոյ. եկաց անդէն եւ ոչ ել արտաքս յանապատէն մինչեւ ցվախճան կենաց իւրոց»․ այն է 1620:

Ազնիւ եւ ժողովրդասէր անձ մը, անխախտ նկարագիր մը, եռանդուն առաքեալ մը եւ անխոնջ գործիչ մը կը զադրէր գործելէ Ազգին եւ Եկեղեցւոյ համար:

#### 24. ՄԵԼԻԻՔ ՀԱՅԿԱԶՆ ՀԱՆՆԱԶԱՐԵԱՆ

Տեղական պաշտօնեաներու անվերջ հարստահարութիւններու եւ ծանր հարկապահանջութիւններու պատճառաւ անհանդուրժելի դարձած էր օսմանեան լուծը Հայկական նահանգներու մէջ (1602/3): Թէ մահմետական եւ թէ հայ իշխաններ, մելիքներ եւ եպիսկոպոսներ գաղտագողի կ'անցնէին պարսկական սահման, ուր կը գտնէին Շահ Աբասէն հիւրամեծար ասպնջականութիւն:

Այս փախստականներու թուին մէջ էր «Մելիք Հայկազն ի Քշտաղս երկրէն ի Սանսօսիս գեղջէ» (Գաւր. 16): Քշտաղք, որ կ'ըսուի նաեւ Քաշաթաղք եւ Քաշթաղ, Սիւնեաց Աղահէճք գաւառին նոր անուանակոչութիւնն է<sup>1</sup>:

<sup>1</sup> Հմմտ. Սիսական, էջ 269: Եղիա գրիչ 1490ին